## 82. ՔԻԼԻՍԱԼՈՒ ԳՑՈՒՂ

*Բրդաբնակ այս գյուղում դեռ կանգուն է անտաշ քարերով և թաղածածկ բավական մեծ եկեղեցին, որի հարավային պատի տակ կան մի քանի հասարակ խաչքարեր։ Տեր-Մովսիսյանի այցելած ժամանակ եղել են երկու արձանագրություններ ունեցողները, որոնք այժմ չկան։ Եկեղեցին ունեցել է շրջապարիսպ։*

*Եկեղեցուց ներքև բխում է մի մեծ աղբյուր, որի ջուրը լցվում է արձանագրություն ունեցող քարե գուռի մեջ։*

***804. ԽԱՉՔԱՐԻ** վրա, որը եղել է եկեղեցու մոտ 5 տող.*

Ի թվիս հայոց :ՈՂԸ: (1249) | Ես. Գրիգոր դարբ|ոյն կանգնեցի զխաչս| իմն և իմ · · · | · · · յիշեցէք:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 99, նաև «Ազգ. հանդ»., XXV, 80։*

***805. ԽԱՉՔԱՐԻ** վրա, նախորդի մոտ, եղծված 2 տող.*

Այ. ես Մամանս · · կանգ| · · ան · · · թվ :ՉԵ: (1256):

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 99, նաև «Ազգ. հանդ»., XXV, 80։*

***806. ԽԱՉՔԱՐ**, մեծ, դրված է եկեղեցու հարավային մուտքին որպես բարավոր, երեսով ներքև, 6 տող.*

ՅԱՆՈՒՆ ՍՅ ԵՍ ՍԱՐԳ
ԻՍՏՈՒԻՋԱՒՆԻԲ
ՈՒՅՀՈՂՆԻՀԱԾԱՒԱ
ԵԿԵՂԵՑԻՆ ԱԺԱՄԻՄՀ
ԱՒՐՆ ԳԱՆԳԱՅՈՎԽԱՓԱՆԷ
ՄԵՐՄԵՂԱՅՆՏԷՐԷ

ՅԱՆՈՒՆ Ա.Յ. ԵՍ ՍԱՐԳ|ԻՍ ՏՈՒԻ ՋԱՒՆԻԲ|ՈՒՅ ՀՈՂՆ Ի ՀԱԾԱՒԱ| ԵԿԵՂԵՑԻՆ. :Ա: ԺԱՄ ԻՄ Հ|ԱՒՐՆ ԳԱՆԳՍ.Յ. ՈՎ ԽԱՓԱՆԷ| ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

Ծանոթ. *ՀԱԾԱՒԱ տեղանունը հնարավոր է նաև ՀԱՃԱՒԱ վերծանել։*

***807. ԱՂԲՅՈՒՐ** գուռի վրա 3 տող.*

ՅԻՇԱՏԱԿԷՆՈՎՍԱՄԻՐ
ՃԱՆԻՆԱԻԲԽԱՆԻՆԱԽԻՃԱՆԻՆ
· · · · ԻԲՂԱ Ք ՌՃԻ

ՅԻՇԱՏԱԿ Է ՆՈՎՍ ԱՄԻՐ|ՃԱՆԻՆ, ԱԻԲԽԱՆԻՆ, Ս.ԽԻՃԱՆԻՆ| · · · · ԹՎ|ԻՆ| :ՌՃԻ: (1670):

## 83. ՄԱՐՋՈՒՄԱԿ ԳՑՈՒՂ

*Գյուղամիջում եղել է անտաշ քարերով շինված և թաղածածկ եկեղեցի, շրջապատում գերեզմանաքարեր։ Գյուղից մեկ կիլոմետր վեր նույնպես հասարակ քարերով շինված մեկ եկեղեցու պատերին 9 տող գրություն.*

*808.* Թվ|ին| :ՉԾԳ: (1364), Աստուծով. իշխանութբ. մեծ|ին Գրիգորո, աւգնականութբ. Սեւ|ադի որդո Զասիկա, մեք նվաստ ք|ահանայքս Գրիգոր, Մեսրոբ եւ եղբ|այր իմ Ովանէս շինեցաք զեկեղեցի, |յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց: Ես Սեւադա տվի զԲինապատառ նշխար|ացու. վասն հոգո Թահերին: ԱԾ ողո|րմի|:

Ծանոթ. *Հրատարակիչը մի դեպքում վերծանել է ԲԻՆԱՊԱՏԱՌ, մյուս՝ ԲԾԻՆ-ՊԱՏԱՌ։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 99բ, նաև «Ազգ. հանդ»., XXV, 79։*